

Երեկոյան չորսին յանկարծական մաղ-
մազ անձրև մը մեր ծրագրերը արեց, գի-
շերը վրայ եկաւ մութ ամպերով, ո՛չ
աստղ, ոչ լուսին. միայն գիւղակին լոյսերը
անհող կը պլլալային ։ Ժողովուրդը ան-
համբեր թափօրին կը սպասէր՝ քանի որ
շեռ Հայերը հոն էին. կ'ուզէր որ փառքե-
րու մէջ տեսնէր Հայ սուրբը, իրը հրե-
զէն Սիւնը Փոյի ալեաց դէմ ։

Ութուկէսին անձրեւը քիչ մը դադրե-
ցաւ, ահա զանգակները յանկարծական
ուրախութեան փոխուեցան. « թափօր կ'ու-
զենք, թափօր կ'ուզենք » կ'ազդակէր
ժողովուրդը ։

Մոմբով, Զահերով լուսաւորուած,
երփնազարդ փողոցներու մէջէն յամրաբայլ
տողուեցաւ սրբազան բանակը, շեփորա-
խմբի և երգերու ընկերակցութեամբ ։ Ո՛հ
ցնծութեան ազդակները կը խանուէին
Փոյին շառաչներու հետ, երթալու համար
հեռուն, հեռուն, կարելի՛ է հոս գտնել
սիրտ մը՝ որ չարտփէ այսքան խանդավա-
ռութեան առէ ։ Փառահնդ կառքի մը վրայ
Արտաշեսեան պերճութեամբ զարդարուած,
կը հանգչէր Ս. Սիմէոնը. ամէնքը անոր
կը նայէին և նա ամենուն. անոր մշտա-
լոյս բիրբուրուն մէջ շատ բաներ կարդա-
ցինք. նա կարօտէն կու լար. այս երկրորդ
անգամս՝ էր որ իւր ազգակիցները այցե-
լութեան կ'երթային ։ Երկիրքն ալ սկսաւ
ցոյզել հանդարտօրէն՝ երբ տաճարին մօ-
տեցած էինք ։ Այլևս զո՛հ էր ժողովուրդը.
ամէն ինչ կատարեալ էր ։

Փոյի ալիքները ալիքներուն, դարբերը
դարբերու՛ թող պատմեն Ս. Սիմէոնին հան-
դէսներու հոշակը, որ իտալական ամէն
լրագրիչներու և հանդէսներու մէջ խոր ար-
ձագանգ գտած էր ։

Սկստ. Ծին առաւտ մինչ գիւղակը
ոսկի երազներով կը ծպտէր՝ տաք համ-
բոյճներ տալով Սուրբ Սիմէոնին՝ կէս սըր-
տով մեկնեցանք զԼպի վեներտիկ, Մխի-

թարեան Մեարանութեան հիմնարկութեան
տարեդարձը մեծահնդէս կատարելու հա-
մար ։

Ո՛վ հայկազն հողի, երբ Փոյի ալիքները
կտրես՝ զնա՛ վայրկեան մը ի Ս. Թենեղիկ-
տոս Փոյ, լինէական երգիչներէ աւելի քեզ
սիրելի խորան մը կայ, ուխտատեղի՛ մը.
դի՛ր հոն ծագիկ մը, լուսաւորչի որդւոյն
մշտալոյս դամբարանն է այդ ։

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՄԵՆԷՆ ԶՕՐԱՆՈՐ ՓԱՐՈՍԷ

Աշխարհիս ամենէն զօրաւոր փարոսը
կը նկատուի Բարիզ-Ալճերի օղային ճա-
նապարհին համար կանգնուածը, որ յետ
երկու տարուան աշխատութեանց՝ դեռ
վերջին տարտեցաւ ։ Ան պիտի ունենայ
մէկ միլեառ մոմի զօրութիւն ։ Կազմուած
է 8 սալմաձեներէ, որոնց իւրաքանչիւրին
կեդրոնին մէջ կը գտնուի կամարած և կան-
թեղ մը 120 մտրեր ։ Սալմաձեները (իւ-
րաքանչիւրը 1, 80 մեդր տրամաշափով)
գետեղուած են չորս չորս, այնպիսի ձևով
որ հեռաւորութեան մը վրայ լուսոյ խոր-
ձերը կը միանան՝ զօրաւորագոյն լուսեղէն
կեդրոն մը կազմելով ։ Հակառակ կողմը
կայ անոր նմանը, զարձեալ նոյն խտու-
թեամբ ։

Փարոսը ասլակեզարդ աշտարակի մը
երևոյթն ունի. բարձրութիւնն է 10 մեդր
և տրամաշափը 5, 50 մեդր ։ Ան պիտի
գետեղուի Ափրիկէ լեռան վրայ Տիփոնէն
Բէշ քիլոմեդր հեռաւորութեամբ, և իւր
լոյսը - երբ վճիտ է մթնոլորտը - տեսանելի
պիտի ըլլայ 300 քիլոմեդր հեռաւորութե-
նէն, իսկ սովորական մթնոլորտով՝ առ
նուազն 150 քիլոմեդր հեռաւորութենէն ։

Բացառութեան փոխպոստ երկրորդ և երրորդ
(Տես Յերկայ Բազմավէպ էջ 312)

- 1 - Աստղեր ։ 2 - Խարխուս ։ 3 - վա-
- րուած մոտ ։ 4 - կօշիկներ ։ 5 - Յուցամոտ ։
- 6 - լուսին ։ 7 - Գրիչ ։ 8 - Հովանոց ։
- 9 - Շուներ ։ 10 - Աշներ ։ 11 - Զուրբ ։

1. Հ. Ալիշան շուրջ երեսուն տարի առաջ հոս եկած
և սուրբին երկրպագած էր ։ (Տես իւր նկարագրութիւնը
Բազմավէպ, 1888) ։